

պետս, յորոց զլեաւորք էին Խաչիկ Լապիսկոպոս Երշարունեաց, Պօղիկարպոս Եռաջնորդ Կամրջաձորոյ, Սարգիս վանական Էռոսմոսի վանաց, և Ստեփաննոս Սեանայ. որք հրամանաւ Եշտոյ արքայի ժողով բազմաց Լապիսկոպոսաց և միանձանց զուամբեալ յԵնի, քննեցին զմիտս և զգործս Վահանայ, և ընդ յայտնութիւն միաբանութեան նորա ընդ Յոյնս ի վերայ քաղկեդոնի ժողովոյն, և յերկառակելն այն ինչ ժողովն խորհէր ընկենուլ զնա յԵթուոյ, Վահան ինքնին թողեալ զՀայրապետութիւն՝ փախստեայ անկանի յաշխարհ Վասպուրական առ Երոստահ արքայ Երծրունի:

Ըստ որոյ և ժողովն ընտրեաց առ այս ի Կաթաղիկոսութիւն Հայոց զՍտեփաննոս Պ. վանահայր Սեանայ վանաց՝ յազգականութենէ Մաշտոցի և Յովհաննու Պատմաբանի:

(Շարունակելի)

ԱՐԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի ՎԵՐԱՅ ՏԷՐՈՒԹԱՆՆ ԵՒ ԿԻՕՆԻ

ՆԵՍԿԻՆ ՀԱՅՈՑ:

(Շարունակելի):

ԺԵ:— Եյս երկրի զինուորներն ուժեղ մարդիկ են, ընդունակ կրելու ամենաերկար և ամենադժուար զրկանքներ և ննդութիւններ: Կոքա միշտ բարի նախանձ ունէին իւրեանց հայրենեաց պաշտպա-

նութեան և բարութեան համար: Բայց այս զինուորներն աւելի նախարարներին քան թէ թագաւորին էին վերաբերում: Մոքա էին որք վայելում էին զօրաց սէրն և նորանց առաջնորդում էին ըստ իւրեանց կամաց: Ըմեն անգամ որ թագաւորի շահն չէր համաձայն նախարարներին, պատերազմի ելքն չարագուշակ էր, մի և նոյն ժամանակ թագաւորին և տէրութեան: Եյդու ամենայնիւ շատ դժուար էր, երբեմն նա և անհնար այսքան նախարարների զանազան շահերն համաձայնացնել կարողանալու, որք իւրեանց համարում էին անկախ իշխաններ: Պատմութիւնը մեզ ուսուցանում է՝ որ ամեն պատերազմի մէջ երկրի վիճակը միշտ կախում էր նախարարների թագաւորի հետ ունեցած միաբանութիւնից: Հազուադիւրէն էր այդ միութիւնն նոցա մէջ, բոլոր պատահարների մէջ ժողովուրդն միշտ զօհ էր գնում իւր աշխատութեան և անձնանուիրութեան: Որ և իցէ մի ձախողուածքի մէջ, մի հասարակական դժբաղտութեան ժամանակ, ժողովուրդն միշտ մոռանում էր իրենն, և աճապարում էր ընդմիշտ ապացուցանել իւր հայրենասիրութիւնն և իւր առ թագաւորն ունեցած համակրութիւնն, բայց նախարարներն միշտ պատրաստ էին դարձնել այս եռանդն ի նպաստ իւրեանց:

Եւսպուհ Բ. Պարսից թագաւորն՝ որ պատերազմում էր Հայաստանի հետ քառասուն տարուց ի վեր, այսպէս էր արտայայտում իւր նախարարներին գրեալ մի նամակի մէջ չորրորդ դարու վերջից յառաջ. «Մի բան որ ինձ աւելի զարմացնումէ, է Հայկական զօրքի սէրն և

« վատահումութիւնն դէպ իւրեանց թագա-
 «ւորն: Արդէն շատ տարուց ի վեր է որ
 « իւրեանց Արտաշէս թագաւորն չէ կեն-
 «դանի նոցա համար, սակայն նոքա մար-
 «տընչում են և միմեանց քաջախերում են
 «կոչելով նորա անունն, երբ որ տապա-
 «լում են՝ մեր պարագլխներին միաբերան
 «կոչում էին, Օհնէյէ՛ք Արաշէն: Աո-
 «ցա գութն և սէրն իւրեանց թագաւո-
 «րի համար մղում էր նոցա այդպէս զո-
 «հելու Արտաշէսին՝ բոլոր մեր պաշտ-
 «պաններն՝ որոց մղում էին ի սուր սու-
 «սերի: Աւս առաւել ինձ զարմացրաւ
 «այն կատաղութիւնն՝ որով կռւում էր
 «Սուշեղեան ջօկան: Ահ էր որպէս մի
 «կիզիչ հուր՝ ձգուած մի եղեգնադաշտի
 «մէջ՝ ամեն անգամ երբ որ բաժանվում
 «էր զօրքից խոյանալ մեր վերայ . . . :
 «Երջանիկ է այն որ կը լինի հրամանա-
 «տար Հայոց զօրաց, որոնք կունենան
 «սէր, անկեղծութիւն, և համակրու-
 «թիւն իւրեանց իշխանի համար: »

ԺԲ: — Հեթանոսութեան ժամանակ
 Հայաստանի քրմապետներն նախարար-
 ների պատիւն և ատիճանն ունէին, բայց
 թագաւորիցն էին կախալ, այս վերջինս
 կարող էր նորանց յանձնել այս պատիւն
 և զրկել հաւասարապէս: Թէև այն ժա-
 մանակուայ քրմապետներն չէին միջամուխ
 լինում դաւառաց քաղաքական կառա-
 վարութեան մէջ, այդու ամենայնիւ քա-
 հանայապետական իշխանութիւնն ժա-
 ռանգական էր, ինչպէս նախարարներինն
 մի քանի ընտանեաց մէջ, և թագաւորն
 նշանակումէր նորա ընտրութիւնն այդ
 ընտանեաց մի անդամին: Օկնի հաստա-
 տութեան Վրիստոնէութեան ի Հայաս-

տան աշխարհ, այն տեղ հաստատեցին նա
 և Պատրիարքական իշխանութիւն, որ
 Պարթևեան տան մի կողմնական ճիւղին
 տուին՝ որն նախարարներից աւելի մեծ ար-
 տօնութիւնք էր վայելում և որ միշտ բա-
 րեկամական առնչութիւնք ունէր Վ. Պօլ-
 սոյ դրան և կղերի հետ: Սուրբն Վրի-
 զոր Պարթևադն՝ վերանուանեալ լու-
 սաւորիչ, այս երկրի առաջին պատրիար-
 քն եղև, և իւր բոլոր կեանքում՝ նա
 մշտնջենաւորապէս միաբան եղև Տրդատ
 թագաւորի հետ: Այս Պատրիարքի ազ-
 դեցութիւնը պահեց թագաւորական իշ-
 խանութեան ճոխութիւնն գրեթէ երե-
 սուն տարուց աւելի: Բայց նորա յա-
 ջորդներն շուտով անցին նախարարաց
 կողմն, և սկսեալ այդ ժամանակից Հա-
 յաստանի թագաւորներն չէին կարողա-
 ղում թագաւորել ապահովութեամբ՝ ե-
 թէ ոչ մտնելով ընդ խնամակալութեամբ
 պատրիարքաց՝ որք եղել էին ուղղիչ ար-
 քայական բարուց և միայնակ միջնորդ նա-
 խարարների և իւրեան մէջ: Աս կար-
 ծում եմ որ առաջին Վրիստոնեայ պե-
 տութիւններից Հայաստանն անդրանիկն
 եղև, որոյ քահանայապետներն ի կիր ար-
 կին մի ընդարձակ կարողութիւն թագա-
 ւորների, մեծամեծաց, և ժողովրդի վե-
 րայ:

ԺԳ: — Հայաստանի նախարարների
 անաստ միաբը ուրիշ ղլխաւոր պարտա-
 ւորութիւն չունէր՝ եթէ ոչ իւրեանց բը-
 նական անկախութիւնն անեղծ պահելու:
 Սակաւ է գտնվում նոցա մէջ մէկն՝ որ
 փառասիրութիւն ունեցած լինի գրաւել
 երկրի գահն՝ չնայելով այն անթիւ և
 յաջող միջոցներին, որ ներկայանում

էին, բայց բոլորն հաւասարապէս զհետ
էին աւանդելու իւրեանց յաջորդներին
իւրեանց նախնիքներէ ժառանգութիւնն:
Այդ երկրէ աշխարհակալներն այնքան
անհանգստացած էին նորանցից՝ որքան
իւրեանց յատուկ վեհապետներն: Պարէ-
հիփախստէն զկեղծ նայաստանն և Պարս-
կաստանն հնազանդում են Ադէքսանդ-
րին: Այս վերջին երկիրը սովորած մի բա-
ցարձակ միտպետի իշխանութեան՝ կրում
է խաղաղութեամբ: Սելեկեանց լուծն՝
մինչեւ այն ժամանակ՝ որ Պարթևքն գալիս
են նորան ազատութիւն տալ: Բայց հա-
զիւ թէ նայաստանի նախարարներն ի-
մանում են աշխարհակալի մահն՝ որ յո-
տի են կանգնում բազմութեամբ, անում
են արիւնքառու յատերազմներ ընդդէմ
Մակեդոնացոց և անդադար աշխատեցը-
նում Սելեկեան թագաւորներն: Պար-
թևաց վերջին թագաւորի գահընկեցու-
թիւնից յետոյ Պարսկաստանն խոնար-
հաբար ծռում է իւր գլուխն իւր յաղ-
թող Արտաշէս Սասանեան Ասորեցոյ
գաւազանի ներքոյ: համանման մի դէպք
պատահեցաւ և նայաստանումն յամի
Տեառն 428ին: Այդ երկրէ թագաւորն
Պարթևաց նման գահընկեց եղեւ: Բայց
նախարարներն որ յաւէտ անմիաբան էին
թագաւորի հետ, իսկոյն զինաւորվում
են, և զարմանահրաշ ջանքեր են անում
մարտնչելով ընդդէմ Պարսից զրեթէ կէս
տարուց աւելի: Արտաշէս, թաթարնե-
րն, և Սելեկեանքն արշաւում են դու-
ցէ այս երկիրը աւելի քան թէ միւս Ա-
սիական նահանգներն, բայց չէին կարո-
ղանում ընդ բռնութեամբ մարդկիւր, և
միայն ապահով են իւրեանց բանակի մէջ:

Առաւել ժամանակն եղեւ քան թէ թա-
գաւորներէ ոյժն՝ որ վերջացրաւ նայաս-
տանի նախարարական տներն:

ԺԳ: — նայաստանի թագաւորներն
մատչելի էին ժողովրդեան բոլոր դատուց
առանց ընտրութեան: նաստատուած էին
այնպիսի օրեր՝ որ լինում էր հասարակաց
ունկնդրութիւն, բոլոր մարդկանց ընդու-
նելութիւն, և անձաբ հարցմանց լըսո-
ղութիւն: Պարս գալով իւրեանց պա-
լատից՝ նոքա կենակից էին լինում իւր-
եանց հպատակաց հետ, և ազատութեամբ
ման էին գալիս նոցա մէջ, և հասարակո-
րէն ընկերացած էին պահապանների մի
փոքր թուով կամ թէ նախարարներով
կամ խորհրդականներով: նամենատ ազ-
գիառանձին սովորութեան՝ բազմիցս թա-
գաւորներն գնում էին նախարարաց կամ
հարուստ անհատների հրաւերքն՝ ճաշի-
լու նոցա տանը: Մեծ ընդունելութեանց
մէջ թագաւորն շրջապատուած էր բազ-
մաթիւ նախարարներով, նա նստում էր
իւր գահի վերայ և տարածում էր իւր
բոլոր շքեղութիւնն: Այն թագը որ կը-
րում էր իւր գլխի վերայ՝ ձող ոսկեից էր
զարդարուած թանկագին քարերով, և ո-
թին շարք մարդարիտով եղբայրատուած,
ունենալով ի միջի նոյնպէս ոսկեայ թա-
գաւորական արծիւն զարդարուած ա-
ղամանգներով: Իւր թագի վերայ դը-
րում էր մի փետուր հաւասարապէս ոս-
կեից և զարդարուած մարդարիտներով:
Մի ոսկեայ շղթայ պաճուճեալ թանկա-
զին քարերով ցած էր ընկնում թագի
վրայից վզանոցի ձեւով, պարանոցի երկու
կողմից մինչի կուրծքն, ի նկքոյ ունէր մի
մէզալ՝ որ կրում էր արդարութեան պատ-

կերն, և յատկաբար կոչում էին զայն աշխարհաւոր հանգոյց: Թագաւորն կրում էր իւր սրտի վերայ մի ուրիշ գոհար՝ որ կոչում էին ասիակ (*), այս որ նշանակում է անբաժանելի հոգի: Թագաւորական մեկնոցն ծիրանեղոյն էր, զարդարուած չորեք կողմից սամուրինիով: Դորա երկու ուսերի վերայ կարուած էր ոսկի, և մարգարտայ ասղնկակարներ, որոնք ներկայացնում էին Թագաւորական արծիւն: Նոցա գօտին մետաքսից էր կապտաղոյն սեննալով յառաջոյ ոսկնկար առիւծ: Նոցա մաշկէքն նոնարոյն էր՝ ինչպէս նախարարներին, այն զանազանութեամբ՝ որ տեսնվում էին Թագաւորի մուծակի վերայ մի կարած արծիւ՝ ունենալով իւր կտուցի վերայ մի օձ: Երբ որ Թագաւորներն գահի վերայ բազմած էին, նախարարներն ևս ունէին իւրեանց տեղն ըստ իւրեանց աստիճանին, որ կոչում էին Բարձր: Այն տեղ կարող էին նստել ի ներկայութեան Թագաւորին և ուստի նորահետ մի և նոյն սեղանի վերայ՝ որպէս արդէն մենք յիշել ենք:

ԺԼԴ. — Ժողովուրդն ճանաչումէր Թագաւորի գործերն, առաքինութիւնքն, նա և սխալներն, և վեհապետն միշտ պարտաւորուած էր իրին յարմարացնել երկրի սովորութեան և բարեւոյ՝ առ ի խոստովել քննադատութիւնից և պահել այն պատիւն՝ որ վերաբերեալ էր Թագաւորական իշխանութեան: Այս տեսակ

ընտանեկանութեան համար սիրում էր Թագաւորին ժողովուրդն, բայց Թագաւորի ամենափոքր պակասութիւնն, որ և իցէ մի կարծիք ժողովրդեան մէջ, կամ մի քննադատական պատճառ պատրիարքի կողմից՝ տեղիք էր տալիս պարսաւելու աստկաբար կամ Թուրքին ըստ չափութեանի վարքն: Ժողովուրդն երբէք չէր շողոքորթում իւրեան կառավարող վեհապետներին: Ասուգապէս խօսելով, նոքա միայն գովում էին նոցա գործն, քաջութիւնն, և կամ իմաստաստհոգութիւնն: Ասաւ զատաբար յանդիմանում էր իւր գլխաւորների պակասութիւնքն, և մինչ երբեմն մինչև անգամ՝ քննադատում էր նոցա մեծ խստութեամբ: Հայոց պատմագիրներն զգաստ են գովասանաց մէջ և պատրաստ յայտ յանդիման մերժելու երկրի իշխանների պարսաւական գործողութիւնքն: Իւրեանց Թագաւորական ներանային գործոց հետ ունեցած յարակցութեան մէջ՝ ընդհանրապէս կողմնակից են հանդիսանում նախարարներին և կղերին. սակաւազիւս է ի նոսա այնպիսիք որք յօժարէին ինպաստ արքային: Բայց այն գործոց մէջ, ուր իւրեանց վեհապետների իրաւունքներն բռնադատուած են օտար իշխանութիւններից, այն ժամանակ միահամուռ կերպիւ միաբան են պաշտպանելու իւրեանց երկրի և Թագաւորի օգուտն՝ եթէ չպատահէ որ կղերն տայր մի այլ ուղղութիւն հաղաբակաց կարծեաց, կամ թէ մատնադիրներն միտքն չորոնէին առանձին շահեր: Ժողովուրդն միևնոյն ժամանակ էր Թագաւորի հպատակն և նախարարների կամ Վահանայապետների պաշտպանեալն:

(*) Երևի Հեղինակն կամենում է ասել ասիակ, որ նշանակէ կուրծքի զորդ բայց թէ կայ մի ասիակ բառ, որ նշանակէ անբաժանելի հոգի, այդ անշուշտ է մեզ:

Դաշնակցական և պատրիարքական կառավարութեան ձևն հնացել էր ժամանակի հետ, ճարտար և ձեռնարկու մարդիք կարող էին որսալ զիւրութեամբ բնակչաց սէրն և նորանց զրգուել ընդ դէմ թագաւորաց՝ յանուն կրօնի, կամ այն պատրուակաւ՝ թէ իւրեանց նախնիքների սովորութիւնն և օրէնքն պղծուել են, կամ քնացել անգործադրելի:

Ժ.Օ. — Այս ազգն սովորութիւն ուներ ի մի վայր գումարուել ժամանակ առ ժամանակ առ ի խորհել հասարակական գործերն՝ որ վերաբերեալ էր իւր օգտին: Մի թագաւորի մահուան, կամ թէ գահակալութեան, մի պատերազմի յայտարարութեան, կամ թէ մի արտաքոյ կարգի զօրաժողով լինելու ժամանակ, և յաղագս այլ ազգային գործոց, իւրաքանչիւր նահապետ և գաւառի ժողովուրդն ժողովվում էր մի նշանակեալ տեղ առ ի տալ զիւր վճիռն, յետ որոյ ուղարկում էին պատգամաւորք՝ թագաւորներին կամ թէ նախարարներին յայանելու ժողովուրդեան ցանկութիւնն: Այս հասարակաց ժողովի մէջ մտանողք անորոշաբար ընտանեաց հայրերն էին, երբեմն նա և իւրեանց որդիքն էլ՝ որոնք ամուսնացած էին, այն տեղ ներկայ էին լինում իւրեանց ծնողաց հետ: Ընտանեաց հայրերն իրաւունք ունէին նախարարաց անջն նստելու, խօսակցելու և ճաշելու նոցա հետ: Ազգային գործոց վերաբերեալ բոլոր այս ժողովների մէջ, քաղաքի բնակիչներն աւելի բարձր աստիճան և պատիւ ունէին քան թէ զիւրի բնակիչներն: Աղաարշակ Ա՝ որ Հայաստանի առաջին Արշակունի թագաւորն եղև, հրամայեց քաղաքարնակ-

ներին վարվելու գիւղացիների հետ ինչպէս իւրեանց եղբարց հետ, երբէք չը նախանձել նոցա պարզեամբ պատուի վերայ, և սարել խաղաղութեամբ և բարի բարեկամութեամբ նոցա հետ*):

Ժ.Զ. — Համեմատ երկրի կրօնին և բարքու վարքին՝ ամենեքեանք ազնիւ էին: Այս բառն նշանակում էր իւրեանց լեզուովն միայնպիսի ազնուութեան զազափար՝ որ շատ տարբեր է մեր այսօրուայ ծանաջած ազնուութիւնից: Մի արթուն, իմաստուն, օգտակար մարդ ազնիւ համարվում էր Հայերից: Ազնուականութեան վերայ այդ տեսակ հայելն յարատեւում է միշտ Արեւելեան ժողովրդոց մօտ: Այդ սկզբմանց զօրութեամբ էր որ Հայաստանումն ամենայն մարդիք անորոշաբար կարող էին աչք տնկել թագաւորական պաշտօնից ի բաց բոլոր միւս աստիճաններին, պատճառ՝ որ ամեն մարդ կարող էր իւր անձնական արժանաւորութեամբ բարձրացնել իւր ընտանիքն մինչև նախարարաց աստիճանն: Ազնուութեան երեք դասերը, այս ինքն արքայական զերդաստանն, նախարարական և ընտանեաց կամ ժողովուրդեան հայրերի սներն ունէին միաբանական կցորդութիւն իւրեանց մէջ: Ահա հասկանալի՝ նախարարներն և քահանայապետների ընտանիքն միշտ խնամութիւն էին անում ընդ միմեանս, և այս երկու վերջինքն հաւատարմապէս հաստատում էին ամուսնական կապեր մասնաւոր հասարակ ընտանեաց հետ, որոնք միշտ համարուած էին ազնիւ թէ և ըս-

(*) Մովսէս Խոր զերբ Բ. զԼ. 7:

տորին աստիճանից: Հայոց լեզուի մէջ
անշուշտ բառն նշանակում է ըստ գրական-
նութեանն աղբյուրն, վրան զի ծագած է
անշուշտ բառից՝ որ նշանակում է աղբ: Մի
ուրիշ բառ՝ որ գործ են ածում յայտնե-
լու համար մի աղբիւն՝ էր աղբաբ բառն, որ
նշանակում է անկապ, Բաղաբաբ կամ
Բաղբ բարբարոսական դասից: Մի երրորդ
յորջորջումն՝ որ ցոյց էր տալիս աղնուա-
կանքն՝ էր Բաղբաբ բառն այս ինքն Բաղբ-
բառնից, և այդ մականունն տալիս էին
պատուելի ընտանեաց: Աւերջապէս ամե-
նամեծ արժանաւորութեան մականունն ի
նոսա էր Բաղբաբ բառն՝ որ ըստ գրականու-
թեան նշանակում է զխաւոր երկվարաց,
և որ ի հիումն տրվում էր այն անձանց՝
որք կարգուած էին հրամանատար զօրաց
և կամ թէ թագաւորական մեծ պաշտօ-
նատարներին: Բաղբաբ բառն նշանա-
կում է Հայերէն Բաղբաբ Բաղբաբ կամ
Բաղբաբաբ անշուշտ, տիրապետական, ըս-
տրական և աւատական կարգադրու-
թիւնքն այս բառերի Աւերջապէս ամե-
նամեծ նշանակութեամբ բնական գոյութիւն
չին ունեցել նախնի Հայաստանում: Այն
տեղ միայն ճանաչում էին մի տեսակ ըստ-
րուկ՝ որ կոչում էին Բաղբ: Այս անունն
միայն տալիս էին ի պատկերակի բանտար-
կեալ կամ թէ մի առեւանգեալ անձի:
Այս երկրի հին պատմութիւնն չէ ընծա-
յում ոչ ինչ տեղ մի իրողութիւն, կամ
թէ մի նշանակ, որ ցուցանէր թէ նոցա
մօտ գոյութիւն ունէր մի տեսակ անկախ
մարդի և կամ թէ մի այլ դաս՝ որք հա-
մարուէին որպէս ձորա կամ ստրուկ:
Այս երկու բառերին՝ կամ գաղափարնե-
րին ինչ նշանակութիւն որ մենք տալիս

ենք՝ մինչ անգամ չկայ նոցա լեզուի մէջ:
Հատանական է որ առաջին քայլն ի մա-
սին ծառայողութեան օրինաց այն է եղիլ,
որ մենք արդէն յիշեցինք, այս ինքն պա-
տերազմի և կամ թէ վրէժխնդրութեան
իրաւամբ համարուել են որպէս ստրուկ մի
զաւտի կամ թէ մի նուաճեալ տէրու-
թեան բոլոր բնակիչներն: Սակայն պա-
տերազմի բանաւարկեալներն երբ հաստա-
տում էին իւրեանց բնակութիւնն մի ան-
գամ Հայաստանում, լինում էին քա-
ղաքակից ք և վայելում էին բնիկների ի-
րաւունքներն: Այդպէս էր օրինակի հա-
մար Հրեայ գերիներն, որ Ասորացոց ժա-
մանակն բերել էին ի Հայաստան Տիգրան
Բի թագաւորութեան ժամանակ: Այս
գերիներն ազատ էին, ապրում էին հան-
գալտութեամբ երկրի գանազան քաղաք-
ներում, և այն տեղ ազատութեամբ պաշ-
տում էին իւրեանց նախնեաց կրօնն: Տէ-
րութիւնն ներդրամիտ էր հաւատոյ գա-
ւանութեան մէջ, և պաշտպանում էր
բոլոր նորանց՝ որք գալիս էին բնակել իւր
երկրում: Անդ տեսանելի էր Ասորացոց,
Պարսից, Հնդկացոց և Հրեից գաղթա-
կանութիւնքն, անձինք՝ որք գործել էին
իւրեանց երկրում մի քանի յանգանք, և
զանազան կողմանց փախստական գերիք
ապահով էին գտանելու բնակարան և պա-
տըշպարան ի Հայս:

(Երեւանի)

Ք. ՕՐ. ՈՅԻՄ ԱՌԱՅԻՆԱՆՑ